

Տտեսագիտական տարբեր դպրոցներ իրենց զարգացման ընթացքում միշտ էլ կարելու էր են մարդկային ռեսուրսների (բնակչության) վերարտադրության հիմնախնդիրներին առնչվող ուսումնասիրությունները: Ընդ որում՝ որպես կանոն, այդ ուսումնասիրություններում բնակչության վերարտադրության հիմնախնդիրները մեծամասամբ քննվում էին տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գաղափարային զարգացումների համակարգում: Այսպես, Անտիկ աշխարհում հիմնահարցը քննարկվում էր ստրկատիրական հարաբերությունների ընդհանուր համատեքստում, եւ կարելու էր որ ոչ այնքան ողջ բնակչության վերարտադրության խնդիրները, որքան հասարակության էլիտար ներկայացուցիչների (որոնց շարքում իհարկե ներառված էին ստրուկները) համապատասխան գործունեության համար անհրաժեշտ թվով մարդկանց ապահովելը: Թեեւ հռոմեական գործիչների ուսումնասիրության առարկան, ըստ էության, աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ տնտեսական միջոցառումների սահմանում էր: Հռոմեական հետազոտողների աշխատություններում նշվում էր, թե բնակչության բարձր տեմպերով վերարտադրության դեպքում առավել կնվազեին հասարակության նույնիսկ կենսական նվազագույն պահանջները բավարարման հնարավորությունները, եւ կծեւավորվեր խռովարար մթնոլորտ երկրի ներսում: Այս ամենի օգնությամբ քաղաքական հետազոտողները գուցե թերի, բայցեայնպես ստացվում էին կառավարող շրջանակներում: Իշխող «վերնախավը» ստրկատերերը, շատ հաճախ ինտելեկտուալ էլիտայի՝ փիլիսոփա-հետազոտողների առաջարկով ուժային միջոցառումներով կարողանում էին զսպել ստրուկների կազմակերպած խռովությունները, ինչը սակայն վերջնարդյունքում խարխուլում էր ստրկատիրական հարաբերությունների համակարգի վերարտադրության հնարավորությունները: Եվոլյուցիոն դիտարկումների այս ենթատեքստում քննվում էին բացառապես պետության քաղաքացիների (որում ներառված էին ստրուկները՝ որպես խոսող գործիչներ) «ինտելեկտուալ» վերարտադրության հնարավորությունները: Պլատոնի վերլուծական համակարգում կրթական գործընթացի կազմակերպումը սկիզբ էր առնում 3 տարեկանից: 3-6 տարեկան երեխաները պետք է ծանոթանային տարբեր խաղերի, զբաղվեին երգեցողությամբ: 7-12 տարեկանում երեխաները պետական դպրոցներում սովորում էին կարգալ, գրել, հաշվել, նկարել, երգել եւ այլն: 13-16 տարեկանում՝ ստանում էին ֆիզիկական դաստիարակություն: 16-18 տարեկանում պատանիները սովորում էին հանրահաշիվ, երկրագիտություն, աստղագիտություն եւ այլն: 18-20 տարեկանում ստանում էին զինվորական նախնական կրթություն: Նրանց մեծ մասը դառնում էր զինվորական, իսկ առավել շնորհալիներն ու ընդունակները 30-35 տարեկանում ստանում էին փիլիսոփայական կրթություն եւ զբաղեցնում դեկավար պաշտոններ պետությունում: Ահա այսպես էր

ուղեշնչվում ազգի շարունակական աճի եւ նրա ինտելեկտուալ մասի «վերարտադրության» գործընթացը:

Հին Արեւելքում դիտարկվող ժամանակահատվածում էապես բարձր էր գնահատվում ազգի սոցիալ-տնտեսական կարիքների բավարարման հիմքերի նախապատրաստումը: Պետությունը տնտեսական միջոցառումների կազմակերպման ակտիվ մասնակից էր: Թեեւ ծավալապաշտական մի շարք կառույցներ՝ դամբարաններ, բուրգեր, ռոզման համակարգեր եւ այլ շինություններ, ստեղծվում էին ստրուկների շահագործմամբ եւ ազատ քաղաքացիների տքնաջան աշխատանքով, սակայն բնակչության վերարտադրության գործում չէր անտեսվում օտարերկրացիների, գերեվարված եւ ստրկացված մարդկանց դերը: Այս գաղափարախոսական, ուրույն ավանդապատումային հասարակարգում տարբեր ուսմունքների սինթեզման համակարգում Հին Արեւելքը հիմնահարցի առնչությամբ առավել լոյալ մոտեցում էր որդեգրել: Ի մասնավորի՝ առաջնային էր դե յուրե հավասարության դրույթը, որը վերապահմամբ տարածվում էր նաեւ ստրուկների որոշակի շերտերի վրա: Ստրուկներն անգամ կարող էին ստանալ ազատ քաղաքացու կարգավիճակ՝ անհրաժեշտ աշխատանքի կատարման, տուգանքների վճարման եւ հարկադիր միջոցառումների ավարտին: Այսօրինակ դրույթակարգի ընդունումը եւ հասարակական նորմալ վերաբերմունքն իհարկե մեծապես ընդլայնում էին բնակչության վերարտադրության հնարավորությունները:

Միջնադարյան Եվրոպայում գիտական մտքի էվոլյուցիան ուղղորդվում էր Աստվածաշնչյան ուրույն մեկնաբանությունների, կրոնական յուրօրինակ դրույթների եւ ուղղափառ եկեղեցու սահմանած կանոններով: Թեպետ գաղափարական այս զարգացումներում կանոնական-սխալաստիզմը մարդկային կյանքը դիտարկում էր որպես բացարձակ արժեք, այնուհանդերձ միջնադարյան Եվրոպայում բնակչության վերարտադրության տեսանկյունից միջոցառումներ չէր կազմակերպվում, ավելին՝ ինկվիզիցիոն դատական գործընթացներում մահապատժի սահմանումը սովորական էր դիտվում: Այս շրջանում, ըստ Էնգելսի, «հոգեւորականությունը նվաճում է ինտելեկտուալ կրթության մենաշնորհը», իսկ Աստվածաշնչյան դրույթները թելադրում էին մարդկային շփումներում մոտոգամ ընտանեկան հարաբերությունների հաստատում: Մարդկային այսօրինակ շփումների հաստատումն ինքնանապատակ չէր: Ավանդական տնտեսությունն իր սահմանափակ հնարավորություններով կարողանում էր հիմնականում լուծել բնակչությանը նվազագույն սննդով եւ առաջին անհրաժեշտության կենսական այլ պահանջները բավարարելու հարցերը եւ դրանով իսկ հոգեբանական առումով այլ բավարարվածության վկայում ուներ:


Արաբական աշխարհում իսլամական գաղափարախոսությամբ այդ խնդիրն այլօրինակ մոտեցում էր ցուցաբերվում: Բնակչության

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՃՈՒՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՃՈՒՄՆԵՐՈՒՄ

Գրիգոր ՂԱՐԻԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Գագիկ ԵԳԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու



վերարտադրության միջոցառումներն ուղղված էին ի սպաս իսլամամետ քնակիչների շահերի բավարարմանը: Իսլամական աշխարհը, գաղափարախոսական մակարդակում հիմնավորելով և արդարացնելով բազմակնությունը, խրախուսում էր նաև բազմազավակությունը: Բնակչության բազմացման նպատակով իսլամամետ քնակիչներին տրվում էին արտոնյալ պայմաններում տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորություններ: Իհարկե, այս դեպքում բնակչության արագ աճը կանխարգելող գործոն էր մահվան կրոնական ընկալումը:

Բնակչության վերարտադրության հիմնախնդիրներն արծարծվեցին Մերկանտիլիստական քաղաքատնտեսական համակարգում: Ազգի հարստությունը եւ երկրի շահերն էին այն ելակետային կատեգորիաները, որոնք հիման վրա մշակվում էր մերկանտիլիստական տնտեսական քաղաքականությունը: Ահա այս պայմաններում առաջարկվում էր պետության աջակցությամբ ձեռավորել պետական պաշտոնյաների և հարուստ առևտրականների լուրջ խավ: Այս ամենը քննվում էր երկրում իրականացվող արտաքին առևտրատնտեսական քաղաքականության զարգացման անհրաժեշտության հանգույցում: Այս հարթությունում առանձնացվում էր նաև երկրում բնակչության խտությունը: Այդ ժամանակահատվածում Անգլիայի բնակչությունը գրեթե 3.5 միլիոն էր: Ըստ մերկանտիլիստների՝ երկրի հարստության ապահովումը կախված էր նաև բնակչության թվից, քանզի այն (բնակչության մեծ թիվը) հնարավորություն էր ընձեռում առավել մեծ չափերով ծավալել առևտուրը, կազմակերպել վերամշակող արտադրությունները եւ այլն: Բնակչության թվի աճն ապահովող գործոն էր կենսամիջոցների հարաբերական էժանացումը: Այսպիսով կարելի է արձանագրել, որ մերկանտիլիստական քաղաքատնտեսական համակարգում բնակչության վերարտադրության տեմպերի ընդլայնման մտահոգությունը տնտեսագիտական՝ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման տեսադաշտում էր:

Վիլյամ Պետոնի առաջին տնտեսագետն էր, որ կիրառեց վիճակագրական վերլուծական մեթոդներ եւ «Քաղաքական թվաբանություն» աշխատությունում հաշվարկեց Անգլիայի ողջ հարստությունը: Այն հավասարվում էր 417 միլիոն ֆունտի: Այդ գումարի 250 միլիոնը կազմում էր Անգլիայի նյութական հարստությունը: Այդ թվին գումարվում էր նաև Անգլիայի մարդկային կապիտալի արժեքը: Ընդհանրապես՝ նրա թվաբանական հաշվարկներում նույնիսկ ներկայացվում էին Անգլիային անհրաժեշտ բժիշկների ու իրավաբանների կոնկրետ թվակազմը, ըստ որի նախընտրելի էր առաջնորդել բուհերի ընդունելության տեղերի սահմանման պարագայում: Այս ուղղությամբ մտածողների՝ բնակչության թվի աճի վերաբերյալ հետազոտությունները նպատակ ունեին անկոտրում պահել «անգլիական կամքը»: Պատերազմական իրավիճակներում այն առանցքային էր: Տնտեսագիտական տեսանկյունից երեւոյթն առնչվում էր աշխատավարձի սահմանման եւ տնտեսությունում սպառվող ապրանքների հիմնախնդրին: Այն հարցում Պետոնի կողմնակից էր օրենքով սահմանել աշխատավարձի նվազագույն մեծությունը: Նա համարում էր, որ գների բարձրացման պարագայում առաջանում է աշխատավարձի բարձրացման անհրաժեշտություն: Սակայն աշխատավարձի՝ անհրաժեշտ կենսամիջոցների նվազագույն մակարդակը գերազանցելը, ըստ Վ. Պետոնի, անթույլատրելի էր, քանզի այն բերում էր կատարվող աշխատանքի ծավալի նվազեցման: Այսպես

օրինակ՝ եթե աշխատավարձի մակարդակը բարձրացվի 2 անգամ, մարդիկ կսկսեն 2 անգամ քիչ աշխատել, որը հասարակության համար կնշանակի այդ չափով աշխատանքի կորուստ:

Այս մոտեցման կողմնակից էր ֆրանսիացի Պիեռ Լեպեզան ղը Բուազիլերը: Նա նույնպես բնակչության վերարտադրության հիմնախնդիրը տնտեսագիտական տեսանկյունից դիտարկում էր աշխատավարձի սահմանման տիրույթում: Հանդես գալով որպես գյուղացիության շահերի պաշտպան՝ նա միաժամանակ համամիտ էր Վ. Պետոնի հետ, թե աշխատավարձը չպետք է գերազանցի գյուղության պահպանման անհրաժեշտ կենսամիջոցների նվազագույնը: Ավելին՝ նա առաջարկում է ցրել բոլոր բանվորական կազմակերպությունները, որոնք պայքարում են աշխատավարձի բարձրացման համար: Պահանջը հիմնավորվում էր այն դրույթով, որ տնտեսական կյանքը զարգանում է իր բնական օրենքներով, հետեւաբար՝ հասարակական եւ այլ կազմակերպություններն այս հարցում անելիք ունենալ չեն կարող:

Արամ Սմիթը, քննադատելով մերկանտիլիզմը, իր հետագոտություններում այդքան չի կարեւորել բնակչության վերարտադրության հիմնախնդիրը: Պա թերեւս բացատրվում էր այն բանով, որ Անգլիայի բնակչության թիվը նախկինի համեմատ աճել էր, եւ նկատելի էին աշխատանքի մասնագիտացման ու մասամբ մեքենայացման երեւոյթներ: Սմիթն առաջինն էր, որ իր աշխատություններում սահմանեց աշխատանքի իրական գինը: Այն կազմված էր անհրաժեշտության եւ հարմարության առարկաների գումարից, որը տրվում էր աշխատանքի դիմաց, եւ տնտեսության զարգացմանը զուգահեռ, այդ գումարը ենթարկվում է փոփոխության: Աշխատանքի նկատմամբ պահանջարկը, ըստ Սմիթի, կախված է կապիտալի կուտակման մակարդակից: Այսպես օրինակ՝ եթե տեղի է ունենում կապիտալի կուտակման տեմպերի աճ, ապա աշխատանքի նկատմամբ պահանջարկը գերազանցում է առաջարկը, եւ տնտեսությունում հաստատվում է աշխատավարձի նվազագույն մակարդակից բարձր աշխատավարձ, ինչն էլ խթանում է բնակչության աճը: Այս ամենը, ըստ Սմիթի, կատարվում է բնական եղանակով՝ ինքնաշխատ մեխանիզմով: Դիտարկած ժամանակահատվածում Անգլիան Գյուսիսային Ամերիկայի համեմատ, առավել զարգացած երկիր էր, սակայն կապիտալի կուտակումն առավել արագ տեմպերով էր ընթանում ապագա ԱՄՆ-ում: Այս պայմաններում աշխատուժի նկատմամբ ձեռավորվող պահանջարկը գերազանցում էր առաջարկը, ուստիեւ Ամերիկայում աշխատավարձի մակարդակը էապես բարձր էր, քան Անգլիայում: Հակառակ իրավիճակներում, երբ տնտեսությունում առկա է կապիտալի կուտակման տեմպերի նվազեցում, աշխատողները ստիպված են համաձայնել աշխատել ցանկացած աշխատավարձով: Ընդհանրապես աշխատողների միջեւ մրցակցության հետեւանքով է, որ աշխատավարձի մեծությունը ամրագրված էր:

Ըստ Սմիթի՝ հասարակության մեջ տարբերայնորեն սահմանվում է աշխատավարձի ինչ-որ բնական մակարդակ՝ պայմանավորված հասարակության ընդհանուր գոյության պայմաններով, տնտեսական զարգացածությամբ, երկրի հարստությամբ, աշխատանքի ու կապիտալի կիրառման քանակով եւ մի շարք այլ գործոններով, **եւ այն երբեմնից չի կարող ցածր լինել նվազագույն աշխատավարձի մակարդակից:**


Վերջապես՝ աշխատավարձի մակարդակի փոփոխությունը նա կապում էր տնտեսության զարգացածության հետ: Առանձնացվում էր 3 դեպք՝ տնտեսական աճ, տնտեսական անկում, անփոփոխ վիճակ: Միայն առաջին դեպքում թերեւս տեղի կունենա աշխատավարձի մակարդակի աճ, քանի որ տնտեսական աճի պայմաններում աճում է աշխատուժի պահանջարկը: Արդյունքում՝ կարելի է եզրակացնել, որ տնտեսական աճը բնակչության թվի ավելացման լավագույն նախապայման է:

Այս դրույթի գրաֆիկական արտապատկերման կարելի է հանդիպել մասնագիտական գրականությունում: Այս պարագայում կարեւորվում է բնակչության վերարտադրության տեմպերի եւ տնտեսությունում նկատվող փոփոխությունների միջեւ կապը: Գծապատկեր 1-ի ներկայացմամբ քննարկենք բնակչության վերարտադրության հիմնախնդիրը՝ ըստ Արամ Սմիթի եւ Դավիթ Ռիկարդի տեսությունների:

Դիցուք՝ (աշխատուժի պահանջարկի) D1, (աշխատուժի առաջարկի) S1 կորերի հատման կետում ձեռավորված հավասարակշիռ վիճակի խախտման պատճառ է թերեւս ձեռնարկատերերի կողմից


Արման ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԵՊՅ դասախոս,
տնտեսագիտության
թեկնածու






W - իրական աշխատավարձի մակարդակն է, որն աճում է հասարակության զարգացմանը համընթաց կառչած աշխատավարձի նվազագույն մակարդակի տիրույթի սահմանափակությամբ: L - երկրում աշխատուժի քանակն է:

աշխատուժի լրացուցիչ պահանջարկի ներկայացումը, որը կարող է պայմանավորված լինել տեխնոլոգիական նորարարությամբ: Նորարարությունները տնտեսությունում կյանքի կոչելու պարագայում տեղի է ունենում աշխատուժի պահանջարկի մեծացում, որն էլ արտահայտվում է աշխատուժի ռեսուրսի գնի բարձրացմամբ: Տնտեսության մեջ աշխատանքի պահանջարկի մեծացումը բերում է աշխատավարձի մակարդակի բարձրացման: Նկարագրված մոդելային հարթությունում աշխատուժի պահանջարկի D_1 կորը տեղաշարժվում է D_2 մակարդակ, W_1 -ը՝ W_2 , սակայն ուշագրավ է, որ տնտեսության մեջ աշխատուժի թվի ավելացում դեռևս տեղի չի ունենում: Տեղի է ունենում կետի վերընթաց տեղաշարժ S_1 կորի վրայով: Յետագայում աշխատողները, ստանալով առավել մեծ չափի աշխատավարձ, լուծում են վերարտադրության հիմնախնդիրը: Այսինքն՝ տնտեսության մեջ տեղի է ունենում աշխատուժի առաջարկի ավելացում՝ S_1 կորի տեղաշարժ S_2 մակարդակ: Սակայն երկարատե ժամանակահատվածում թեև հնարավոր են աշխատավարձի մակարդակի տատանումներ, սակայն այն ի վերջո ամրագրվում է նվազագույն մեծությամբ:




Յետագայում աշխատողները, ստանալով առավել մեծ չափի աշխատավարձ, լուծում են վերարտադրության հիմնախնդիրը: Այսինքն՝ տնտեսության մեջ տեղի է ունենում աշխատուժի առաջարկի ավելացում՝ S_1 կորի տեղաշարժ S_2 մակարդակ: Սակայն երկարատե ժամանակահատվածում թեև հնարավոր են աշխատավարձի մակարդակի տատանումներ, սակայն այն ի վերջո ամրագրվում է նվազագույն մեծությամբ:

Յիմնախնդիրը հետագոտելիս Ռիկարդոն առաջնորդվում էր հորի բերրիության նվազման օրենքով: Ըստ Ռիկարդոյի՝ տնտեսական աճը կանգ է առնում քանակական ռեսուրսների սահմանափակության պատճառով: Առաջարկված տնտեսական համակարգի ելափետային նախադրյալ է դիտարկվում միկրո և մակրո տնտեսական առնչությունների նույնացումը: Այս տրամաբանությամբ ամբողջ տնտեսությունը նույնացվում է հացահատիկ արտադրող հսկա ֆերմայի հետ:



Դիտարկվող ֆերմայի հողատարածությունում (որը ես ենթարկվում է նվազող բերրիության օրենքին), ներդրվում է ռեսուրսների միատարր կազմ՝ կապիտալ և աշխատուժ, եւ այս պարագայում Ռիկարդոն նկատելիորեն հրաժարվում է արտադրության կազմակերպման եռագործոն մոդելի դիտարկումից: Կապիտալը եւ աշխատուժն առանձնացվում են փոխկապվածությամբ, ուստիեւ պատահական չէ հորիզոնական առանցքում այդ երկու փոփոխականների միաժամանակյա դիտարկումը (տիպական կլինի վերհիշել Ադամ Սմիթի աշխատավարձի տեսությունը) եւ որոշակիորեն տվյալ հարթությունում զաղափարական «նույնացումը»:

Չացի նկատմամբ պահանջարկը բացարձակ ոչ առածգական է, եւ այն դիտարկվում է որպես ֆունկցիա բնակչության թվից $\{D = F(N) \ N=K\}$: Արտադրության ծավալը մոդելում հնարավոր է դառնում որոշել, երբ ներմուծում ենք բնակչության, հետեւաբար՝ տվյալ դեպքի համար կիրառելի կապիտալ (ռեսուրս)ի, որոշակի ծավալ: Այսինքն պատկերում ռեսուրսի մեծությունը հավասար է՝ OCMD ուղղանկյան մակերեսից հանած AM (կապիտալի եւ աշխատանքի ներդրմամբ ստեղծած սահմանային արդյունք) բազմապատկած OM (ներդրանքի քանակով) մեծությունը: Ամբողջ արտադրանքի մեծությունը հավասար կլինի OCMD ուղղանկյան կամ, որ տվյալ դեպքում նույնն է, OEAM սեղանի մակերեսին:



Վշխատավարձի OW մեծությունը որոշելու պարագայում տեղի է հիշել դասական քաղաքատնտեսական դպրոցին Ռիկարդոյի պատկանելությունը եւ այն հանգամանքը, որ նա քաղաքատնտեսության ուղղությամբ հետազոտությունները խորացրեց Ադամ Սմիթի աշխատության ընթերցումից հետո: Ահա եւ մեծապես ընդունելով Սմիթի աշխատավարձի տեսությունը՝ այն կիրառեց եկամտների բաշխման հարաբերությունների իր նկարագրությունում: Ի մասնավորի՝ աշխատավարձի OW մակարդակում (հնարավոր տատանումների հնարավորությամբ) աշխատուժի առաջարկը երկարատե ժամանակահատվածում գրեթե անվերջ աճում է: Այսպի-

սով շահույթի մեծությունը ստացվում է հավասար՝ թողարկված ամբողջ արտադրանքի ծավալից (OEAM=OCDM) հասնած ռենտայի (BEA=BCDA) և աշխատավարձի (OWKM) մեծությունները: Քանի որ շահույթի նորման դրական մեծություն է, արտադրողները կունենան կապիտալի կուտակման իրական դրդապատճառ: Սակայն, կապիտալի կուտակմանը զուգընթաց, համամասն տեմպերով կաճի նաև աշխատողների թիվը: Մոդելում քննարկվելիք տրամաբանությամբ ենթադրվում է, որ կապիտալի կուտակման տեմպերի աճին զուգահեռ, կաճի նաև աշխատուժի նկատմամբ պահանջարկը: Հասկանալի է, որ երկարատև ժամանակահատվածում այդ աճը անվերջ շարունակվել է կարող, ուստի աշխատավարձի մեծությունը կսահմանափակվի նվազագույն մեծությամբ: Բացի այդ, աշխատուժի թվի աճ է ենթադրվում տվյալ մոդելի շրջանակներում Մալթուսի ներկայացրած բնակչության օրենքի տրամաբանության ընդունմամբ: Գրաֆիկում AM-ը կտեղաշարժվի աջ՝ միաժամանակ սահմանափակված լինելով MP կորի նվազման էֆեկտով: Փոփոխուն ծախսերի («կապիտալ-աշխատանք») դիմաց ստացվող սահմանափակ արտադրանքի, ինչպես նաև շահույթի մեծությունը նվազման միտումով հանդես կգան տնտեսությունում: Տեսականորեն նվազումը կշարունակվի մինչև M'S կետը, երբ շահույթի մակարդակը կհավասարվի 0-ական մեծության (ե/կամ կձգտի 0-ական մեծության): Սակայն, Ռիկարդոյի խորին համոզմամբ, գոյություն ունի շահույթի ինչ-որ QW մակարդակ, որից պակաս մեծություն ակնկալելու պարագայում ձեռնարկատերը չի դիմի ռիսկի:

Ավստրալիայի, որ մշակելի հողատարածքների ավելացմամբ (ինչը ժամանակի յուրաքանչյուր հաջորդական պարբերաշրջանում առավել ծախսատար է դառնում) միավոր արտադրանք ստանալիս առավել մեծ աշխատանք է ծախսվում: Տնտեսությունում մեծանում է կապիտալ ռեսուրսի օգտագործման ինտենսիվությունը: Մեկ աշխատողի հաշվով մեծանում է կապիտալի օգտագործման ծավալը, այս ամենին զուգահեռ՝ մեծանում է նաև ռենտան: Բարձրանում է հացի գինը, եւ անհրաժեշտություն է դառնում մեծացնել ներդրվող ռեսուրսների չափաքանակը: Այսպիսով, մեկ աշխատողի հաշվով ներդրումների ավելացումը շահութաբերության մակարդակի նվազման հարաբերակցության հետ դիտարկմամբ ստեղծում է այնպիսի պատկերացում, որ երկարատև ժամանակահատվածում տնտեսությունում ջբանում են ներդրումներ կատարելու շարժառիթները: Այսօրինակ տրամաբանությամբ վերլուծությունում ենթադրվում էր, որ տեխնոլոգիական առաջընթացը կբարձրացնի արտադրողականության մակարդակը: Սակայն երեւույթն ամենեին չէր փոխի վերոգրյալ պատկերացումը, մասնավորապես որ, ժամանակի երկարատև հատվածում այդ տրամաբանությունը զուգահեռվում էր աշխատողների նվազագույն կենսամիջոցների ապահովման նվազագույն մակարդակի աճով:

Այս ամենով հանդերձ ակնհայտ է, որ Դ. Ռիկարդոյի վերլուծություններում բնակչության վերարտադրության ուղղությամբ միջոցառումները տնտեսության մեջ բերում են վատատեսական փոփոխությունների: Արդյունքում բարձրանում է վճարվող ռենտայի մեծությունը, նվազագույն աշխատավարձի մակարդակը, եւ այս փոփոխությունների արդյունքում ներդրողների շրջանում նվազում է լրացուցիչ ներդրումներ կատարելու շահագրգռությունը, քանզի նկատելի է ներդրումների դիմաց ստացվող հատույցի նվազեցումը: Ռիկարդոյի ներկայացրած քաղաքատնտեսական համակարգում բնակչության թվի եւ տնտեսությունում թողարկված ամբողջական արտադրանքի մեծությունների միջև որոշակի կախվածություն է սահմանվում: Իհարկե դասական քաղաքատնտեսության մասնագետները, այնուհետ դասական տնտեսագիտության ներկայացուցիչները բնակչության թվի եւ աշխատողների թվի միջև որոշակի հավասարություն էին դնում: Բացատրությունն այն էր, թե տնտեսավարող սուբյեկտը հայտնվում է գործազուրկի կարգավիճակում միայն իր կամքով, եւ ավտոմատ էին երկրում մշտապես լրիվ զբաղվածության առկայություն: Այս սկզբունքներին համապատասխանության դիրքերում էր նաև դասական քաղաքատնտեսության հիմնադիր առաջնեկներից Դավիթ Ռիկարդոն:

Այս մոդելում (տես՝ գծապատկեր 2) ես՝ Ռիկարդոն հոգեհարազատ է տնտեսագիտական այն կողմնորոշմանը, թե ռենտան ավելցուկ է ապրանքի գնում, եւ չի կարելի այն դիտել, որպես գնի ձեւավորման պատճառ: Այս հարթությունում գործում է Սեյի «շուկաների օրենքը» նույնության տեսքով, եւ առաջարկը ոչ միայն ծնում է պահանջարկ, այլև ցանկացած ծախս նշանակում է մեկ այլ տնտեսա-

վարող սուբյեկտի համար: Ահա եւ ամբողջական արտադրանքը սահմանվում է այս տիրույթում: Դասական քաղաքատնտեսության սկզբունքներին համահունչ կառուցված այս մոդելում բնակչության թիվը եւ տնտեսության մեջ աշխատողների զանգվածը նախապես տրված հաստատուն մեծություն էին: Բնակչության, այնուհետ աշխատողների, թվի հաստատունության կանխադրույթի սահմանում ամենեին էլ չէր բացառում այդ մեծության փոփոխության հնարավորությունը տնտեսության մեջ: Այս կերպով բնակչության թվի OM մեծության դեպքում աշխատավարձի մեծությունը կազմում էր RM, իսկ շահույթի մեծությունը PR միավոր: Այս մեծությունները հավասար էին նախորդ գրաֆիկում աշխատավարձի նվազագույն մակարդակով որոշվող OW ուղղանկյան մակերեսին եւ համապատասխանաբար՝ WQ շահույթի մեծությամբ պայմանավորված ուղղանկյան մակերեսին: Տվյալ գրաֆիկում աշխատավարձի նորման որոշվում է աշխատավարձի ֆոնդի եւ բնակչության թվի հարաբերակցությամբ: Այլ կերպ՝ RM/OM=tga: Շահույթի դրական մեծության առկայությունը գրավիչ գործոն է ձեռնարկատիրության համար, որն էլ նպաստելու է տնտեսությունում ներդրումների ավելացմանը եւ բերելու է բնակչության թվի աստիճանական մեծացման: Այն տեսակետներն սահմանափակվելու է OM կետում: Շահույթի մեծությունը նվազման միտում է ցուցաբերելու: Այն գրաֆիկորեն տեսանելի է PR-ից PR' անցմամբ՝ մինչև դիցուք S կետը: Այս կերպով կանխորոշվում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման ապագան, եւ ապացուցվում էր աշխատավարձի հաստատունության վերաբերյալ կանխադրույթը: Աշխատավարձի մեծության սահմանումը նվազագույն մակարդակում կարող էր փոփոխություններ կրել՝ պայմանավորված ազգային, աշխարհաքաղաքական, տնտեսական զարգացման եւ մի շարք այլ գործոնների ազդեցությամբ: Սակայն, ընդհանուր առմամբ, նկարագրված օրինաչափությունները միանշանակ դրսևորվում էին տնտեսության մեջ: Այս ամենը վերոգրյալ տրամաբանությամբ տեսանելի էր ժամանակի հեռավազ հատվածում՝ որպես գերիշխող միտում, ինչն էլ որոշակիորեն հենք էր ծառայում մարքսյան տեսությունում:

Թոմաս Ռ. Մալթուսի տեսությունում բնակչության վերարտադրության հիմնախնդիրներն առանցքային նշանակություն էին ստանում: Պատասխան տարիքում ավագ Մալթուսի հետ քննարկումներում հաղթող դուրս գալու ձգտումը Թ.Ռ. Մալթուսին ակամ ստիպեց ուսումնասիրել մի շարք աշխատություններ (խոսքն Ուոլեսի, Թաունսենդի հետազոտությունների մասին է), որոնց առանցքային գաղափարն այն էր, թե մարդկության թիվն աճում է ավելի արագ տեմպերով, քան գոյության համար անհրաժեշտ կենսամիջոցները: Այս տրամաբանությամբ՝ ոչնչով չսահմանափակվող մարդկության աճը կհանգեցնի 20-25 տարին մեկ թվի կրկնապատկման: Այն հողի նվազող բերրիության տեմպերի առկայությունը պայմաններում կործանարար հետևանքներ կունենա երկիր մոլորակի բնակչության համար:

Թ.Ռ. Մալթուսի ապրած տարիներին տնտեսության մեջ հաստատվում էր խոշոր արտադրության կազմակերպման գերակայություն: Տնտեսավարող բազում սուբյեկտներ սնանկացման եզրին էին: Սա լրացուցիչ թափ էր հաղորդում գործազրկության առանց այդ էլ ահագնացող տեմպերին: Այլ կարգաթափում կենսունակությունն ապահովող կարգը պահպանելու համար իշխող դասակարգին պետք էր գաղափարախոսություն: Այդօրինակ գաղափարախոսական տարրեր առկա էին Թ.Ռ. Մալթուսի հետազոտություններում: Այն հատկապես տեսանելի դարձավ 1798թ. հրատարակված «Փորձ բնակչության օրենքի մասին» կապված հասարակության ապագա կատարելագործման հետ» աշխատությունում: Պարզվեց, որ գրքի հեղինակը երիտասարդ քահանա, ապագա տնտեսագետ Թ.Ռ. Մալթուսն է: Գրքում ներկայացված սկզբունքները լուրջ քննարկումների տեղիք տվեցին, որոնք թերեւս իրենց գիտական մասով չեն սպառվել մինչև հիմա:

Աշխատության լույսընծայումը ժամանակագրական առումով տեղին էր, քանզի իշխող դասակարգի դիրքերի ամրապնդման համար կարիք ուներ գաղափարական հենքի, որի ձեւավորողն ապագայում Թ.Ռ. Մալթուսն էր: Առաջնորդվելով հողի եւ սննդի սահմանափակության գաղափարով՝ Մալթուսը հետազոտեց բուսական եւ կենդանական աշխարհում աճը սահմանափակող գործոնները: Ստացված եզրահանգումները Մալթուսի համար որոշիչ էին բնակչության աճի տեմպերի վերաբերյալ ուսումնասիրություններում: Մարդկային ցեղը շարունակելու կենսական ունակությունը

բնագրային ռեակցիա է, այնպես, ինչպես որոշակիորեն նկատելի է կենդանիների մոտ: Աշխատության հիմնական կրեդոն այն էր, թե մարդու վերարտադրության կենսաբանական ունակությունը բազմակի գերազանցում է կենսամիջոցներ արտադրելու մարդու կարողությանը: Նա պնդում էր, թե բնակչությունն աճում է ավելի մեծ տեմպերով, քան հողի բարիքներ արտադրելու կարողությունն է: Ըստ Մալթուսի՝ բնակչության թիվն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, իսկ նրա աճի համար անհրաժեշտ կենսամիջոցների ծավալը՝ լավագույն դեպքում թվաբանական պրոգրեսիայով¹²: Արդյունքում՝ երկու հարյուրամյակ անց բնակչության թվի հարաբերությունն անհրաժեշտ կենսամիջոցներին կհավասարվի 256-ը հարաբերած 9-ի, իսկ ընդամենը երեք հարյուրամյակ հետո՝ 4096-ը հարաբերած 13-ի: Ըստ Մալթուսի՝ եթե մարդը լույս աշխարհ է եկել, իսկ նրա ծնողներն ի վիճակի չեն նրան սննդով ապահովել, ու եթե հասարակությունն էլ նրա աշխատանքի անհրաժեշտությունը չի զգում, ապա նա ավելորդ է երկրի վրա և տեղ չունի «կյանքի ինչ-չունքում»¹³: Հետևաբար՝ նա փորձում էր իր ընթերցողներին հանգստացնել՝ պատճառաբանելով, թե բնությունը ես հոգ է տանում հավասարակշռության ապահովման համար: Այս պարագայում տեսանելի է վատ կառավարման և արտադրության կազմակերպման նպատակով ռեսուրսների անհամաչափ բաշխման հիմնահարցերում իշխող դասակարգի արդարացման ջրղարկված մոլուցքը: Այսօրինակ տարամաբանությամբ արձանագրվում էր, թե վատ կառավարման և ռեսուրսների անհամաչափ բաշխման միտումներ տեսանելի էին բոլոր հասարակարգերում: Նա քննադատաբար էր արտահայտվում պետությունում իրականացվող սոցիալական ծրագրերի առկայությամբ: Պատճառաբանությունը մենկն էր, թե պետության և/կամ մասնավոր բարերարների իրականացրած սոցիալական ծրագրերը միայն թթվացնում են տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնությունը, և մարդը, կորցնելով սեփական ուժերի նկատմամբ վստահությունը, մշտապես իր հույսը կրնի այլոց վրա:

Որպես մարդկության թվի «անչափ» աճը կանխարգելող գործոն Մալթուսը առանձնացնում էր «բարոյ(կրթ)ական սանձահարումը»: Այն է՝ չունեորների ամուսնական զսպվածության գիտակցումը: Առանձնակիորեն կարեւորվում էր անհատի խոհեմությունն ու հեռատեսությունը՝ որպես մարդկության թվի աճը կանխարգելող գործոն: Այս դեպքում մեթոդաբանական առումով տեսանելի է դասական քաղաքատնտեսության մասնագետներին մեծապես բնորոշ միկրոմակարոնական կատարված վերլուծության արդյունքների տարածումը դեպի մակրոառնչություններ:

Միաժամանակ, Մալթուսին հուսադրում էր այն հանգամանքը, որ ժամանակ առ ժամանակ կրկնվող հիվանդությունները, համաճարակները, պատերազմները մարդկության թվի աճը սահմանափակող գործոն էին :

Մեթոդաբանական տեսանկյունից Մալթուսը պարենի արտադրության մեծացման անհնարիությունը բացատրում էր այդ ժամանակահատվածում գիտական շրջանակներում մեծ ընդունելության արժանացած՝ «հողի նվազող բերրության օրենքի» ազդեցությամբ: Բնակչության թվի «երկրաչափական պրոգրեսիայով» աճի միտումը հիմնավորվում էր Ամերիկայի բնակչության թվի վիճակագրական վերլուծությունների արդյունքում: Ի մասնավորի՝ 1790-1860թթ. ԱՄՆ բնակչությունը մոտ 4 միլիոնից հասավ ավելի քան 31 միլիոնի: Այդ տարիներին ԱՄՆ-ում խոշոր քաղաքների՝ Նյու Յորք, Ֆինիքսիաստի, Ֆիլադելֆիա, Չիկագո, Քլիվլենդ, Սենտ Լուիս է այլն, առաջացումը պայմանավորված էր ներգաղթյալների թվի ավելացմամբ, որը սակայն հաշվի չէր առնված հետազոտությունում: Բացի այդ, աշխատությունում չէր արտացոլվում ներգաղթյալների և երկրում ծնված բնակիչների թվային հարաբերակցությունը: Այս համատեքստում հետաքրքրական էր Մալթուսի այն վերապահումը, ըստ որի՝ յուրաքանչյուր ընթերցող, ժամառանալով աշխատանքին, որում թե՛ե հնարավոր են որոշ միջավայր, պետք է հասկանա, որ այն իր հիմնական մասով նպատակաուղղված է հասարակության ստորին խավերի երջանկացմանը:

Տնտեսագիտական մտքի զարգացման այժմյան հարթությոց բազմիցս անորոշաբանում են Մալթուսի բնակչության տեսությամբ: Պահանջարկներում հնչում են նաեւ քննադատական դիտողություններ, թե նա չկարողացավ մասնագիտական տեսանկյունից կանխատեսել արտադրական հեղափոխության տնտեսագիտական նշանակությունը¹⁵: Դ. Վեյրը մալթուսյան տեսությունը շարադրեց գրաֆիկական հիմնավորմամբ՝ ցույց տալով մալթուսյան

պատկերացմամբ տնտեսական հավասարակշռության խախտման անհնարիությունը: Նա ընդունում էր աշխատավարձի մեծության և բնակչության թվի միջեւ հակադարձ կորելացիոն կախվածության՝ դասական քաղաքատնտեսության իրեն նախորդած մասնագետների մշակած տեսությունը: Վեյրն այս ամենն արտապատկերեց գրաֆիկական հիմնավորմամբ: Ըստ Մալթուսի՝ բնակչության սահմանված կենսամակարդակի աճին զուգահեռ, աճում են ազգի վերարտադրության հնարավորությունները, և հակառակ դեպքում այն նվազում է, ինչը ներկայացված է գծապատկեր 3-ում՝ գրաֆիկական հիմնավորմամբ¹⁶:

Մալթուսի վատատեսության պատճառը հաստատված հավասարակշռության անխախտ հաստատուն բնույթն է: Վեյրի ներկայացմամբ՝ եթե տեղի է ունենում մշակելի հողատարածքների ընդլայնում, ապա մալթուսյան (բնակչության) տեսությամբ կաճի իրական աշխատավարձի մակարդակը, և կբարելավվեն կյանքի կենսապայմանները: Արդյունքում՝ կաճի ծնելիության ցուցանիշը, և կնվազի մահացածների թիվը: Այս միտումը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ աշխատուժի առաջարկի աճի արդյունքում չնվազի իրական աշխատավարձի մեծությունը և չվերականգնվի վերոգրյալ հավասարակշռությունը:

Այս համատեքստի ուսումնասիրությամբ 1920-ականների մշակվեց բնակչության օպտիմալ թվի տեսություն: Ըստ դրա՝ բնակչության թիվն օպտիմալ է, եթե տնտեսավարող սուբյեկտների եկամուտը ձգտում է «առավելագույն մակարդակի»¹⁷: Այն մասնագիտական գրականության մեջ շարադրվում է գրաֆիկական ներկայացմամբ :

Ինչպես ակնհայտ է գծապատկեր 4-ից, 1 տնտեսավարող սուբյեկտի հաշվարկով աշխատավարձի մեծությունը հավասար է նվազագույն մակարդակին՝ բնակչության B թվի դեպքում: Բնակչության վերարտադրությունը սահմանափակվում է B կետում՝ մալթուսյան տեսության շրջանակներում ներմուծված «սահմանափակող» և «կանխարգելող» միջոցառումների շնորհիվ: Բնականաբար, տեսության շրջանակներում ցանկալի է ապահովել երկրում բնակչության թիվ AB միջակայքում: Սակայն գրաֆիկում տեսանելի է, որ դա երկարաժամկետ հատվածում անկենսունակ գաղափար է: Դիցուք A կետում ես աշխատավարձի մեծությունը նվազագույնն է, սակայն դեռես սմիթյան մեկնաբանությամբ արտադրողների կողմից որակյալ աշխատողների նկատմամբ ներկայացված պահանջարկի շնորհիվ տեղի կունենա բնակչության թվի աճ: Վերջապես՝ աշխատանքի արտադրողականության աճը, աշխատանքի գործընթացի մեքենայացումը և այս ուղղությամբ կատարվող մի շարք այլ միջոցառումներ կարող են տեղաշարժել C կորը մի կողմից D մակարդակի, սակայն դրսեւորվող այս միտումները շարունակում են նույն տրամաբանությամբ գործել նաեւ հաստատված նոր D մակարդակում:

Վերջապես՝ բաուզյան ընկալմամբ աշխատուժի վերարտադրության և աշխատավարձի մակարդակի միջեւ առկա այս կապը բնորոշվում է մեխանիկական տերմինով :

Թե՛ե հիմնահարցի առնչությամբ մասնագիտական գնահատականները սկզբունքորեն տարբերվում էին, սակայն տնտեսագիտորեն վերլուծական առումով կարծես թե դասական քաղաքատնտեսության, իսկ հետագայում դասական տնտեսագիտության ներկայացուցիչներին ներկայացվում էր տեսական և գործնական դաշտերի հետազոտական փոխառնչման խզման մեղադրանք: Զանի որ գործնականում ամենեւին էլ զարգացած երկրներում չէր նկատվում սննդի և կենսապայմանների (քանակական և որակական) վատթարացում:

Հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակներում դասական քաղաքատնտեսության սկանավոր ներկայացուցիչ Զոն Սոյուարտ Միլի հայացքներն աչքի էին ընկնում վերլուծական առումով գիտական առանձնահատուկ հրապույրով: Նա կարեւորում էր բնակչության վերարտադրության արդյունավետ մեկնարկային պայմանների ձեւավորումը: Այս պատճառով նա սահմանափակում էր մասնավոր սեփականության իրավունքի լիիրավ տարածումն ամբողջական հողային ռեսուրսների նկատմամբ: Նա, կարեւորելով մրցակցության բարերար ազդեցությունը և աշխատողների ընդունակությունների բացառաճանաչ, աշխատանքային ունակությունների զարգացման ու մի շարք այլ օբյեկտիվ գործոնների կառուցողական նշանակությունը, մերժում էր նույնիսկ հողի ժառանգման իրավունքի գաղափարի (ամբողջական) կենսունակության հնարավորությունը տնտեսությունում: Ըստ Միլի՝ Laissez faire-ի քաղաքականության իրականացման սկզբունքներից շեղու-

մը թույլատրելի է՝ միայն ու միայն հասարակական բարորության նկատառումներին քիչ է հասարակական վերարտադրության հիմնահարցերի կարգավորումից ելնելով: Հակառակ դեպքում այդ շեղումը ուղղված է ի վնաս հասարակության: Նա, հասարակական վերարտադրության և բարորության աստիճանի բարձրացման գաղափարից ելնելով, առաջարկում է ինստիտուցիոնալ այնպիսի մեթոդներով ձեռնարկում, որ արտադրության միջոցները մեխանիկորեն հայտնվեն այնպիսի տնտեսավարող սուբյեկտների տնտեսության ներքո, ովքեր արտադրության «ուղղակի» կազմակերպիչներն են: Այս պարագայում հնարավորինս ապահովված կլինեն պետության ներսում հասարակության անդամների հարմարավետ գոյակցության համար անհրաժեշտ պայմանները՝:

Այս հարթությունում նա հասարակական վերարտադրության հիմնախնդիրները վերլուծում էր հասարակության մտավոր ներուժի վերարտադրության համար անհրաժեշտ պայմանների ձեռավորման համատեքստում: Առաջնորդվելով այդ տրամաբանությամբ՝ առաջարկում էր պետական ու մասնավոր կրթական համակարգերի փոխլրացման սկզբունքով կենսագործունեության ապահովում տնտեսությունում: Վաղ հասակում կրթական գործընթացի ապահովման պարագայում նա կիրառական էր համարում մասնավոր կրթական համակարգի ներդրումը և այդ մեխանիզմի կենտրոնականության (կազմակերպական) ապահովումը: Կիրառելի էր տևային պայմաններում կրթության ստացման երաշխիքների ստեղծումը: Հեռավոր շրջաններում, որտեղ մասնավոր կրթական գործընթացի կազմակերպումը դժվար մատչելի ու ծախսատար էր, ըստ Միլի՝ պետությունը պետական միջոցներով պետք է հոգա երիտասարդ սերնդի կրթությունն ապահովելու գործընթացը: Այսօրինակ կրթական համակարգի ներդրումը, Միլի կարծիքով, ապահովելով տարակարծություն՝ կնպաստեր հասարակության ինտելեկտուալ զարգացմանը և էր կառավարի գիտելիքի ստացման, տարբերակային մտածողությունների փոխառնչման ու ընդհանրապես ինտելեկտուալ կապիտալի վերարտադրության ընթացքը՝:

Բնակչության վերարտադրության հայեցակարգին լրջորեն անդրադարձել է նաև Կ. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորում՝ կապիտալի կուտակման գործընթացի վերլուծության և կապիտալիստական կուտակման ընդհանրական օրենքի բացահայտման կապակցությամբ: Ընդ որում՝ բնակչության վերարտադրության խնդիրների քննարկումը, դասականների տեսության ինտերգրացիայով, Կ. Մարքսը ես դիտարկում է բանվոր բնակչության եկամուտների (աշխատավարձի) փոփոխությունների միտումների հետ, իսկ վերջինը՝ կապիտալի կուտակման պրոցեսում, նրա օրգանական կազմի բարձրացման առնչություններում: Կ. Մարքսը ցույց է տալիս, որ «...աշխատանքի նկատմամբ եղող պահանջարկը որոշվում է ոչ թե ամբողջ կապիտալի, այլ նրա փոփոխումն բաղադրամասերի չափերով», որը կապիտալի օրգանական կազմի անընդհատ աճման հետևանքով շարունակ պրոգրեսիվ կերպով քչանում է: «Կապիտալիստական կուտակումը մշտապես արտահայտում է մի հարաբերական բանվորական գերբնակչություն, որը կապիտալի արժեքի աճման, միջին պահանջմունքների տեսակետից ավելցուկ է...»: «... Բնակչության մի օրենք է այս, որը հատուկ է արտադրության կապիտալիստական եղանակին, այնպես, ինչպես արտադրության առանձին պատմական եղանակ բնակչության յուրահատուկ... օրենքն ... ունի »:

Քաղաքատնտեսությունում պատմական ուղղության ի հայտ գալը պայմանավորեց բնակչության վերարտադրության հիմնահարցի վերլուծության տարբեր հանգույցներում ազգայնականության որակմամբ երանգավորումների սկզբնավորումը: Ընդհանրապես՝ այս քաղաքատնտեսության պատմական դպրոցի ներկայացուցիչները որոշակի նեղումությամբ էին մոտենում դասականների հայացքներին այն մասով, որ նրանք մակերեսորեն էին վերաբերվում տնտեսության մեջ պետության դերին և հաշվի էին առնում ազգի պատմական արմատներն ու մշակույթի ազդեցությունը տնտեսական զարգացման գործում: Քննադատության էր արժանանում դասականների քաղաքատնտեսական «կոսմոպոլիտիզմը»՝ բոլոր երկրների ու ժողովուրդների համար միանման ու ընդհանրականորեն կիրառելի քաղաքատնտեսական տեսություն ստեղծելու գաղափարը: Վերլուծական այս համակարգում պատմական դպրոցի ներկայացուցիչները համոզված էին, որ տնտեսական զարգացման արդյունքում դասական քաղաքատնտեսության ներկայացուցիչները, անձնական շահի առավելագույնս բավարարման և շահույթի մաքսիմալացման գաղափարներով տոգորված, մոռացության էին մատնում հասարակական (ազգային) վերարտադրության հնարավոր երաշխիքների ստեղծումը տնտեսությունում: Նույնիսկ ազատ առևտրի կազմակերպման գաղափարին հակադրում էին թույլ զարգացած երկրների համար առավել կարելի ազգի «արտադրական դաստիարակության» գաղափարը: Մինչ Զեյնը, Պատմական դպրոցի ներկայացուցիչները առաջին էին, որ մասնակիորեն հանդես եկան մերկանտիլիստների ներկայացրած դրույթների պաշտպանի դիրքերից: Այլապես ազգը (ազգության, հասարակության, վերջապես՝ ազգային էթնոսի վերարտադրությունը) դիտվում էր որպես միջին օղակ անհատի ու հասարակության միջև: Վերոգրյալ հիմնախնդիրները վերլուծվում էին ազգային շահին գաղափարապես շարժված տիրույթում: Այդ պատճառով պատմական դպրոցի ներկայացուցիչների մոտ հանդիպում էին սոցիալական ոլորտին առնչվող հիմնախնդիրների արծարծումներ: Գերմանիայի Պատմական դպրոցը մարքսյան շիփան տիրույթից անցում կատարեց ֆաշիստական ուղղվածության դրսևորման: Ազգի «անաղարտ» վերարտադրության կարելիությունն առավել քան կենտրոնական դրույթ ընդունվեց ազգայնական շարժման ծավալման ընթացքում:

Ավերդ Մարշալի աշխատանքներում ես կարելի է հանդիպել բնակչության վերարտադրության հիմնախնդիր արծարծման վերաբերյալ դրույթների: Սակայն այդ ամենը դիտվում էր ոչ առանցքային նշանակությամբ և միարժեքորեն տեսանելի էր հետազոտվող հիմնախնդրին ուսումնասիրության սահմանային ձեռնարկում տրվող ընդհանրումներ: Երկրորդ լինելով ոչ հեղափոխական փոփոխությունների կողմնակից՝ նա կամրջեց ես համակարգված ներկայացրեց դասականների ու մարքսիստների տնտեսագիտական հայացքները, շարկապելով Գերմանիայի պատմական դպրոցի ձեռքբերումներին: Նա Էվոլյուցիոն սկզբունքով շարադրեց տնտեսագիտական մտքի հաջորդաբար զարգացման հնարավորությունը: Մարշալյան տեսությունում տնտեսագիտությունը հետազոտում էր մարդկային հասարակության նորմալ կենսագործունեությունը: Անհատական և հասարակական գործունեության ոլորտների ուսումնասիրությունը փոխառնչվում էր բարեկեցության նյութական հիմքերի ձեռնարկման գաղափարին: Այսպիսով միանշանակ էր մարշալյան մտահոգությունը՝ բնակչության վերարտադրության անհրաժեշտ հիմքերի ձեռնարկման առնչությամբ: Որպես տնտեսագիտության մեջ դասական կողմնորոշմամբ ներկայացուցիչ՝ հիմնախնդիր դիտարկումն աղերսվում էր բարեկեցության նյութական հիմքերի ձեռնարկման և ապահովման դրույթներին: Այս հարթությունում առանձնացվում էր կրոնական շարժառիթների դերը, և տնտեսագիտության ուսումնասիրության առարկան բնութագրվում էր մարդկային գոյատևման, զարգացման և ամենօրյա կենսագործունեության հետ կապված հիմնահարցերի մշակմամբ:

1898-99թթ. ԱՄՆ-ում ի հայտ եկած տնտեսագիտության նոր ուղղությունը՝ ինստիտուցիոնալիզմը, ժամանակագրական զարգացման այլ (գիտության տարաբնույթ բնագավառների փոխառնչման) տիրույթում անդրադառնում էր բնակչության վերարտադրության հիմնախնդիրներին: Անձնական շահով առաջնորդվող տնտեսավարող սուբյեկտին փոխարինելու էր գալիս տնտեսական շարժառիթների ցանկում առանցքային նշանակություն ունեցող ծնողական պարտքի գիտակցմամբ, գիտելիքի ձեռքբերման ու աշխատանքի բարձրորակ կատարման (նույնիսկ) «բնագոյալի» ձգտմամբ առաջնորդվող տնտեսավարող էակը: Վերլուծության այս հանգույցում բնակչության վերարտադրության տեսությունում կատարվում է որոշակի փեղկում: Հասարակությունում տարանջատվում է «ունեւոր անարտադրողական» դասակարգ: Նրանց վերաբերմունքը տնտեսական գործընթացներին դիտարկվում է ընչաքանակությամբ, այլ ոչ օգտակարությամբ, արտադրության շահագործման հոգեբանական դիրքերից: Առանձնացնելով մարդու երկրորդ մեջ ամփոփված՝ իրեն այլ մարդկանց հետ համարելու, ինչպես նաև նախանձի դրսևորման զգացումը, նա այն առնչում է Զ. Դարվինի «բնական ընտրության տեսությանը»: Այժմ կարծես հերթը բնագիտությանն էր՝ ի դեմս Զ. Դարվինի, ծառայություն մատուցել տնտեսագիտությանը: ԱՄՆ-ում դարասկզբին գերապատվելիորեն ձեռնարկված մենտոնական կարգը բխեցվում էր Դարվինի տեսությունից: Ամերիկացի գիտնական Ռոստոկի բնորոշմամբ՝ երբ ձեռնարկվում է «զանգվածային սպառման հասարակություն», և տնտեսության զարգացումը դիտարկվում է հեռավաճ նպատակ-

արման և շահույթի մաքսիմալացման գաղափարներով տոգորված, մոռացության էին մատնում հասարակական (ազգային) վերարտադրության հնարավոր երաշխիքների ստեղծումը տնտեսությունում: Նույնիսկ ազատ առևտրի կազմակերպման գաղափարին հակադրում էին թույլ զարգացած երկրների համար առավել կարելի ազգի «արտադրական դաստիարակության» գաղափարը: Մինչ Զեյնը, Պատմական դպրոցի ներկայացուցիչները առաջին էին, որ մասնակիորեն հանդես եկան մերկանտիլիստների ներկայացրած դրույթների պաշտպանի դիրքերից: Այլապես ազգը (ազգության, հասարակության, վերջապես՝ ազգային էթնոսի վերարտադրությունը) դիտվում էր որպես միջին օղակ անհատի ու հասարակության միջև: Վերոգրյալ հիմնախնդիրները վերլուծվում էին ազգային շահին գաղափարապես շարժված տիրույթում: Այդ պատճառով պատմական դպրոցի ներկայացուցիչների մոտ հանդիպում էին սոցիալական ոլորտին առնչվող հիմնախնդիրների արծարծումներ: Գերմանիայի Պատմական դպրոցը մարքսյան շիփան տիրույթից անցում կատարեց ֆաշիստական ուղղվածության դրսևորման: Ազգի «անաղարտ» վերարտադրության կարելիությունն առավել քան կենտրոնական դրույթ ընդունվեց ազգայնական շարժման ծավալման ընթացքում:

ների ամբողջական համակարգում, սկզբունքորեն փոփոխության է ենթարկվում homo economicus-ի վարքագիծը տնտեսությունում: Վերաբեծվորվում են վերափոխված են ներկայանում տնտեսագիտական մի շարք «օրենքներ» ու սկզբունքներ: Այս պարագայում բնակչության պահանջմունքների վճարունակությամբ ապահովվածության դրույթակարգը դառնում է ոչ էական, քանզի այն «տրված մեծություն էր» դիտվում քննվող ժամանակահատվածում: Ըստ այս տեսության՝ հասարակական վերարտադրությունը «երկակի» ընթացք էր ունենալու: Հասարակության միջին շերտերից էվոլյուցիոն զարգացմամբ առանձնացվում է ինժեներատեխնիկական մտավորականությունը՝ «տեխնոստրուկտուրան»: Տնտեսական իշխանությունը փոխանցվում է հասարակական այս շերտին, եւ բնական վերարտադրությամբ ձեռնարկությունների սեփականատերերի խավը ռենտա ու վարձակալական վճարներ գանձողի դեր է ստանձնելու: Այս մտածողությունը հոգեհարազատ էր մարքայան եւ դարի հարթությունում փոխանցելի էր նորմարքայան գաղափարախոսությանը: Այս գաղափարախոսություններում, վերորդյալից գատ, ընդհանրություն էր կապ «կապիտալիզմի շահագործողական կողմի» քննադատությունը: Ըստ Վերլենի՝ հասարակությունը բաժանվում է ոչ թե կապիտալիստների ու «պրոլետարիատների»՝ ինչպես Մարքսի մոտ էր, այլ գործարարների ու ինժեներների: Մտածելակերպի փոփոխին ձեռք միավորում է ձեռնարկության մասնավոր յուրացման սկզբունքը պաշտպանող կառավարիչներին, իրավագետներին, բանկիրներին՝ հակադիր բեռնում թողնելով ինժեներական մտավորականությունը: Բարեփոխումների ինստիտուցիոնալ սցենարը ենթադրում էր գիտատեխնիկական առաջընթացի եւ վերջինի արդյունքների ներդրման արագացման գործընթաց՝ փոխապայմանավորված ինժեներատեխնիկական մտավորականության դերի բարձրացմամբ: Վերջապես՝ նա եւս նորմարքայան գաղափարախոսության շրջանակներում ընդունելի կերպով գտնում էր, որ մարդու եւությունը պատմության ազդեցությամբ ենթարկվում է որոշակի փոփոխությունների, ինչի արդյունքում փոփոխության են ենթարկվում տնտեսության մեջ դրսևորվող օրինաչափությունները: Սակայն այս ամենի արդյունքում չէին նախատեսվում տնտեսական համակարգի էվոլյուցիոն զարգացմամբ հեղափոխական փոփոխություններ: Այս ամենով հանդերձ, նորմարքայան տնտեսագիտությունը բնական վերարտադրության ինստիտուցիոնալ սցենարը կոփոխելու որպես մարքայան ավետած միտումների մտալուստ գալուստ:

Քելսայան հայեցակարգում բնակչության վերարտադրության հիմնախնդիրը կարծեք թե քննվում էր ածանցյալ կերպով: Այս հարթությունում հասարակական բարոյության հիմնախնդիրն, որից էլ միջնորդավորված՝ բնական վերարտադրությանը, անդրադարձ էր կատարվում պետական միջամտության եւ արդյունավետ պահանջարկի ձեւավորման դիրքերից: Թեպետ քելսայան հայեցակարգում ինքնաշխատ սպառման մակարդակի փոփոխությունը (բարձրացումը) հասարակական զարգացման հետեւանք էր դիտվում: Թեեւ այդ ամենը էվոլյուցիոն զարգացմամբ բնական վերարտադրության տեմպերի կրճատման լրացուցիչ պատճառ կառանձնացվել: Այս դեպքում եւս կարեւորվում էր մարդու եւության հոգեբանական ընկալումը, ըստ որի՝ տնտեսավարող սուբյեկտն իրեն անվտանգ է զգում տնտեսական աճի, եկամուտների ավելացման պայմաններում խնայողությունների տեսակարար կշռի ավելացման դեպքում: Այս միտումը, տնտեսագիտական խոր բովանդակությունից ամփոփելուց գատ, դիտարկվող հիմնախնդրի՝ բնակչության վերարտադրության կաշկանդող գործոն է առանձնացվում:

Տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակակիրներ Վ. Շուլցի 1979թ., Յ. Բեքթերի 1992թ. եւ բազում այլ գիտնականների՝ Ս. Բոուլի, Ս. Վոդիովի, Բ. Կիկերի աշխատություններում բնակչության վերարտադրության հիմնահարցերը որոշակիորեն ինքնաշխատ կարգավորման մակարդակի էին բարձրացվել: Այն կարծեք թե հետարդյունաբերական հասարակության ձեւավորման հետեւանք էր: Տնտեսական առողջացման այժմյան եղանակները ներկայացնում են գոյություն ունեցող տնտեսագիտական դպրոցների առաջարկած մոտեցումների ամբողջություն: Այս տիրույթում մարդկային եւ աշխատանքային ռեսուրսներ հասկացությունների միջեւ սահմանները լուրջացող բնույթ են ընդունում: Այս միտումն առաջինը երեւակվեց քաղաքատնտեսության դասական դպրոցի շրջանակներում: Թեեւ տնտեսագիտական զարգացումների արդի պարբերաշրջանը, շուկայական ձեռքբերումների,

մասնավոր սեփականության ինստիտուտի առկայությանը զուգահեռ, ստանում է սոցիալական «երանգավորում»: Բնակչության վերարտադրության ապահովումը գնահատվում է այս համատեքստում, եւ առանցքային նշանակություն է ստանում ինտելեկտուալ կապիտալի վերարտադրության հենքի ձեւավորումը²³: Վերջապես մաթեմատիկական առաջարկած բարոյակրթական սանձահարման կանխարգելող միջոցառումները հարթահարված են: Իհարկե, հասարակական հարաբերությունների զարգացման ներկա ժամանակահատվածում առնվազն սկզբագույն պահանջմունքների բավարարման բոլոր հիմքերը ձեւավորված են:

1. Տես՝ Платон, Сочинения, в 3 т., Москва 1968-1972; Аристотель, Сочинения, в 4 т., Москва 1975-1983.
2. Марк Порций Катон, Земледелеие, Москва 1950, с. 7; Марк Туллий Цицерон, Речи, т. I, Москва 1962; Катон, Варон, Колумела, Плиний, О сельском хозяйстве, Москва 1957.
3. Васильев А.С., Проблемы генезиса китайской мысли (формирование основ мировоззрения и менталитета), Москва 1989; Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 3, 1977, էջ 467-468.
4. Աստուածաշունչ Մատան Դին Եւ Նոր Կտակարանների, երրայակյան եւ յուսկան բնագիրներից թարգմանուած, Թեհրան 1989, էջ 141-143.
5. Коран, Пер. И.Ю. Крачковского, Ростов-на-Дону: Феникс, Издание третье, 2003, с. 64-84.
6. Տես՝ նույնը.
7. 1769թ. Վատին տրվեց շոգեշարժիչ արտոնագիր, 1760թ. Ստիրլինգաշարժում գործարկվեցին Caaron Ironworks մետալուրգիական գործարանի դռները. տես՝ Экономическая теория, под редакцией Д.Ж. Имуэлла, М. Милгеима, П. Ньюмена, пер. с англ., научный редактор чл.-корр. РАН В.С. Автономов, Непрерывность в экономической истории, Дональд Н. Макклоски, Москва 2004, с. 179.
8. Блауг Марк, Экономическая мысль в ретроспективе, Москва 1994, с. 39-43, 82-84.
9. Հետաքրքրական կարող է լինել այն, որ հետագայում այս նույն գաղափարը մարքայան մտածողության շրջանակներում գործարկության առաջացման հիմնորոշ պատճառ էր դիտարկվում: Այս պարագայում եւ ընդհանրապես հետագայում կարեւոր է հասկանալ մտածողի ներկայացրած տրամաբանությունը եւ տնտեսագիտական այն իրավիճակը, տնտեսական այն միջավայրը, որոնցում ձեւավորվում է այս կամ այն գաղափարը.
10. Դիցուք՝ Մալթուսի օրինակում քննարկված օպտիմալ բնակչության թիվը.
11. Блауг Марк, Экономическая мысль в ретроспективе, Москва 1994, с. 84-85.
12. Հայացքներն ամենայն խորությամբ ընկալելու համար տեղին կլինի վերհիշել նաեւ Մալթուսի մոտ երիտասարդ տարիքում այս գաղափարի արմատավորման եւ կողմ հանդես գալու համար բարենպաստ պայմանների ձեւավորման նախարկյալները.
13. Տես՝ Аникин А.В., Юность Науки: Жизнь и идеи мыслителей-экономистов до Маркса, 4-е изд., Москва 1987, Глава 13, с. 240-246.
14. Տես՝ М. Блауг, Экономическая мысль в ретроспективе, Москва 1994, с. 62-67.

Այս պարագայում նույնիսկ կարելի է հանդիպել երկրում բնակչության օպտիմալ թվի առնչությամբ տնտեսագիտական հիմնավորմամբ հաշվարկների:

15. Экономическая теория, под редакцией Д.Ж. Имуэлла, М. Милгеима, П. Ньюмена, перевод с английского, научный редактор чл.-корр. РАН В.С. Автономов, Теория народанаселения Мальтуса, Д.П. Уэйр, с. 493, Москва 2004.
16. Տես՝ նույն տեղում, էջ 494.
17. Այս պարագայում տնտեսագիտական մտքի զարգացմամբ կատարվում էր վերլուծական առումով ինստիտուցիոնալ փոխանցում: Ըստ դրա՝ եկամտի առավելագույն մակարդակը բնորոշվում էր դիցուք ինստիտուցիոնալ գործոններով.
18. Տես՝ М. Блауг, указ. соч., с. 68-69.
19. Տես՝ նույնը.
20. Հետագայում քելսայան տեսության կողմակիցները տվյալ գաղափարում կոտեսեն խնայողությունների ու ներդրումների համապատասխանության անհարմարություն: Սակայն կարգավորման մեխանիզմը մի փոքր այլ էր, որն էլ ինստիտուցիոնալիստների համոզմամբ՝ իրենց հայացքների որոշակի քննարկումների նախնական դրսևորումն էր:
21. Տնտեսագիտական մտքի հետագա զարգացումների ետադարձ հայացքով վերծանություններում կարելի է արձանագրել, որ տվյալ ուսումնասիրության շրջանակներում դուրս բերված ենթադրությունները համապատասխանում են տնտեսագիտության ձեռքբերումների այժմյան մակարդակին:
22. Կ. Մարքս, Կապիտալ, հատոր 1, Երեւան 1933, էջ 598-600.
23. Ընդհանուր գծերով կարծեք թե այնպես, ինչպես մտնիկ աշխարհում, սակայն իհարկե ինտելեկտուալ, հասարակական, տնտեսական զարգացման այլ միջավայրում: